

բատի երջանկոսիթմ Գահակալութիւնը : Եւ ապա կը խնդրեմ Աստուծմէ պահել զԿայսրն իւր պարագայինք ՚ի խուա ՚ իւր երջանիկ և երկար կենօք . միշտ վառ պահել բարեջան Նախարարաց սրտին մէջ հայրենասիրութեան ոգին , որ առաւել եւս իմաստութեամբ խորհին և գործեն ՚ի շնութիւն Մեծաղօր Տէրութիւն և ՚ի բարօրութիւն ամեն հպատակաց . տալ զօրավարաց և զօրաց քաջութիւն քազիի , քաջութիւն սրտի եւ յաջողութիւն զինուց :

Կեցցէ և հաղար կեցցէ Առողթան ԻՌԻՒԱՏ թագաւորն և ամենասիրելի Կայսրն մեր :

ՊԱՏՄԱԿԱՆ

Օսմանեան նախարարաց մէջ հըս-
չակաւոր եւ մէծանուն Ծիփաթ Փա-
շայի Յունաստանի և Եգիպտոսի ա-
պատամբութեան , Ուուսաց պատերազ-
մին , ՚ի Վիենայ գեսապանութեան , և
՚ի Բ. Դուռն իւր նշանաւոր հանճա-
րով և խոհեմութեամբ վարած պաշ-
տօններուն միջոցին , ՚ի գրի առած քա-
ղաքական և գեսապանագիտական ամե-
նակարեւոր խնդիրները եւ գեպքերը
և առ Բ. Դուռու գրած նամակներն ,
որ արդէն Տաճկերէն լեզուաւ հրա-
տարակուած է , արժան դատեցինք
նոյն հետաքրքրական և դիտութեան
արժանի գործերը կարելի եղածին չափ
մասն առ մասն թարգմաննել հայերէն
աշխարհիկ լեզուաւ , և Հանդիսիս մի-
ջոցաւ հետղինուէ հրատարակել , ըս-
յուսով որ բարեմիտ և ուստումնասէր
ընթերցողաց ախորմելի կը թուի :

Ասուածաբուր-
գարտաղեպ:

ՍԿԻԶԲՆ ԳՈՐԾՈՅՆ

ՅՈՒՆԱՏ ազգը ՚ի սկզբանէ անոնի
Օսմանեան հզօր և արդարակորով Պե-
տութեան հովանաւորութեան տակ
տաղտարած , և այսքան պէսպէս բա-
րութեանց և անչափ չնորհաց և երախ-
տեաց արժանացած էր : Այս հպա-
տակ ազգէն (*) 1831 (1821) թուա-
կանի միջոցները , նախ Էֆլակի կողմե-
րը , և յետոյ Մորայի կղզին և նորա
շղականները , և Միջերկրական ծովուն
կղզիներէն ոմանք գլուխ վերուցին եւ
ապստամբեցան Օսմանեան Պետու-
թեան գէմ . և յանդուգն համարձա-
կութեամբ պէսպէս չարեաց և անար-
ժան գործոց ձեռնամուխ եղան : Ուս-
տի Օսմանեան Պետութիւնը պարտա-
ւորեցաւ յամառ և անզուսպ ապրու-
տամբները պատուհասել և սպատիւլ:
Վասնորոյ այս ապատամբ հպատակաց
վերայ խումբ խումբ բանակներ կաղ-
մեց , որով ստահակաց շատերը պատ-
մեցան , և յափշտակուած կայսերա-
կան բերդերը եւ ամրոցները նոյա-
ձեռքէն ազատեցան : Ապստամբներէն
անոնք որ անձնատուր հնագանդեցան,
գթութիւն եւ ներողութիւն գտան :
Սակայն սակաւը օմանք յապստամբաց
հաստատուն մաօք իրենց յամառու-
թեան մէջ կացին մնացին : Եւ մինչ-
դեռ Բ. Դուռու այս ստահակները լըս-
պելու պէտք եղած պատրաստութիւն-
ները ամենայն ջանիւք յառաջ կ'տա-
նէր , ահա 1842 (1827) թուին եւ
Տէ՛կալ ամսոյ սկիզբները , Անդղիոյ Տէ-
րութիւնն Բ. Դունէն ինդրեց , որ Մո-
րայի և նորա շղականները գտնուած
կրկներուն մէջ խոլած ժողովուրդք ըլ-
դունուելով ինքնանք միայն բնակելու

(*) Այս թուականին յօյն կղերք մէծամէծ իր-
ուվութիւններ յարուցին ընդգեմ Հայոց աԵրու-
սաղէմ Բնթէ՛մի եկեղեցւոյն համար : Պարմ . Ա.
Շահումէդ . Յանահիք :

և միանդամայն աղատ լինելու շնորհն ընէ, եւ նոցա վերայ խրկուած կառավարիչները և այլ գործալարները յետո կուռտին : Եւ ապա Ռուսից և Գաղղից Տէրութեանց հետ միաբանելովը ըստին որ Յունաց այս խռովութեան տարածումը, իրենց ծռվային նաւարկութեանց և վաճառականութեան մեծամեծ վեասներ պատճառած է : Եւ Յունաց համար այս արտօնութիւնը և աղատութիւնն ձեռք բերելու համար կ . Պօլայ երեք Տէրութեանց Դէսպանները պաշտօնապէս գրով խրնդեցին յօսմանեան Կայսերութենէ , Սակայն սոցա առաջարկութեանց վախճանը կարի վեասակար լինելով , թէ ըստ օրինաց և թէ ըստ քաղաքական իշխանութեան , ընդունելութեան արժանի չէր կրնար ըլլալ , մանաւանդ որ Յոյնք ՚ի սկզբանէ անտի , Յօսմանեան հոգատակ ըլլալով , բնակած տեղերնին Տէրութեան ժառանգութիւնն էր : Ուստի պէտք էր , անոնց մէջէն այս պիտի ապաստամբութեան յանդգնողները խստիւ պատճել , և հնազանդողները ներողութեամբ յարգել . և թէ այս խնդիրն Տէրութեան ներքին գործոց պատիանելցն՝ այս մասին ոչ ոք երեք իրաւունք ունէր որ և իցէ ողատառաւ միջամտելու և խնդիր յարուցանելու : Այս եղանակաւ վերոգրեալ Դէսպանաց կրկին և կրկին անդամ ծանուցուեցաւ . բայց որովհետև նորէն շատ թախանձանքներ և ստիպ մունքներ եղան , Բ . Դուռը վերջնական յայտարարութեամբ իւր իրաւունքն հրապարակեց և յայտնապէս ծանոց , թէ այս խնդրոյն ոչ ոք իրաւունք ունի միջամտելու : Ասոր վերայ Դէսպանները վերատին ծանուցին . Եթէ մեր ոյս խնդիրը ընդունուի , մեր Տէրութեանց մէջ համաձայնութիւն և դաշնք եղուծ է Միջերկրական ծալլի նա-

ւատորմիջ հանել և քանի մի իրաց ուշադիր լինիլ . ի պատասխանի տարբ . Դռնէն գարձեալ ծանուցուեցաւթէ այս խնդիրն յաւիտեանս չը պիտի ընդունուի :

Անակարին նաւահանգստին մէջ Կայսերական նաւատորմին կրուստը :

Չամկէճայի և Սուլճճայի կողմերը գըտնուած ապստամբ և յամառ խռովայացները կամ բնաջիջ բառնալու եւ կամ ՚ի հնազանդութիւնի ածելու գործը . Մորայի և Ճիտտէի կուսակալ և սպարապետ Մէհէմմէտ Ալի Փաշայի որդւոյն Խալրահիմ Փաշային յանձնուած էր , որ 1828 (1828) թուին և Ռէպիլ ամսոյ 15/ն , Կայսերական տորմի զէն և Եգիպտական նաւերէն , քանի մի հատ առաւ յիշեալ կղզիներուն վրայ երթալու համար , երբ Անտվարին նաւահանգստէն դուրս ելաւ , դաշնակից Տէրութեց Միջերկրական ծուվը ելած տորմիզը նորա ճանապարհը արդեց , և նա յակամայից վերստին նոյն նաւահանգիստը գարձաւ : Եւ մինչդեռ կայսերական նաւերն խարիսխ ձգած նստած էին , յիշեալ Տէրութեանց տորմիզը իրեւ բարեկամ յանկարծ նաւահանգիստը մտաւ , և անմիջապէս պատերազմի սկսաւ . նաւահանգստին մէջ Կայսերական և Եգիպտական նաւերէն տասը հատը հատը հրոյ ճարակ տալով այրեցին , և քառասնիւ շափ եւս դրբ իներզինքնին ծովին լնկղմեցին , թըշնամեաց ձեռքը մինալու երկիւլով . այս եղելութիւն նոյն ինքն Խալրահիմ գրով Բ . Դրան ծանոցյ : Այս տիսուր գէսք քին վրայ Տէրութիւնը ամեն կողմի պաշտօնէից պատուերներ խրկեց զգուշութիւն և պահպանութիւն ընելու համար :

Հրանքը ՚ի Կ. Պոլս Երևանի պաշտօնէից
եւ գլխաւորացն այսպզիաց :

Վերոդիրեալ խնդրայն կարեւորու-
թեան համատ , հարկ եղած ատեն
բարբ իւլամ ժողովուրդք միաբանու-
թեամբ ընդհանրապէս զինուորելու ,
միաբանուիրան կապերը ամբացնելու ,
և ուղիղ դիտաւորութեամբ Տէրու-
թեան և օրինաց վերայ խորհելու հա-
մար արեւելեան և արեւմտեան (Առ-
նապոլէ եւ Բութէլ) եւ Ալպանիայի
(Առանալուտի) կողմերը գտնուած ե-
րեւելի պաշտօնեացք , իջևանիք եւ
կուսակալք քաղաքապետաց եւ այլ
մեծամեծ եւ երեւելի անձնիք հը-
րաւիրուեցան ՚ի Կ. Պոլս : Նոքա եւս
անմիջապէս ճամբայ ելալով Ճեմալէլ
էլլէլ ամսոյ սկիզբները Մայրաքաղաքը
հասան , և ըստ պատշաճի նախարա-
րաց տուները հիւրընկալուեցան , եւ
ապա պատուէր հրամանի եղաւ ըստ
հարկաւորութեան պէտք եղած և ու-
զուած ատեն պատերազմի պիտոյք
հոգալ . և նոքա յօժարութեամբ յանձն
առին , իւրաքանչիւրն խոստացաւ իւր
երկին կարողութեան համեմատ զօրք ,
պաշար և այլ կարեւոր պիտոյք հոգալ
եւ տալ : Յետ այնորիկ առաջի մեծի
Վէզիրին իւրաքանչիւրն ըստ արժանա-
ւորութեան իսկաններ զգեցան , և պա-
տուաւորներէն ունանիք Աբբային ներ-
կայանալով խոստացան փութաջանյօ-
ժարութեամբ Տէրութեան ծառայել .
և ամենեցուն ծանուցադրեր տրուե-
ցան , կազմ և պատրաստ գտնուիլ .
և ապա իւրաքանչիւր ոք իւր տեղը վե-
րադարձաւ :

(Շաբաթակիլ :)

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒԹՈՒՄՆ
ԱԶԳ . ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՔ

Վանայ Գեր . Առաջնորդ Արժ .
Տ. Թաղէսս վարդապետի 18.5 0-
դոստոս 31 ամսաթիւ մէկ Տեղեկա-
գիրը կը ծանուցանէր , թէ Վանայ
Խօսապ նահանգի ընակիներէն Մար-
տիրուեան Աւետիս անուն անձը , որ
ասկից աասն և հինգ տարւոյ չափ ա-
ռաջ իւր հայրենիքը ամեւմնացած ,
միայն երեք ամիս իւր կնոջը հետ ան-
ցունելէն յետոյ՝ զանի թողած և մէկ
նած էր գտաւառէն , մինչեւ հիմա հոն
ը գառնալէն զատ՝ իւր մանկամարդ
կինը երեսի վրայ թողեր և իրեն նկատ-
մամբ բնաւ տեղեկութիւն մը չէ հա-
լորդեր՝ ոչ իւր կողակցին և ոչ այլում։
Արժ . վարդապետը զայս կը ծա-
նուցանէ , որպէս զի պէտք եղած տը-
նօրէնութիւնն ըլլաց յայսմ մասին :

Արդ Կոստանդնուպոլաց Կեդր .
Վարչութեան Կրօնական Ժողովյն ու-
րոշմանն համաձայն ներկայ Պաշտօնաւ-
կան ծանուցաւմն կը հրատարակուի
Աղջային բովանդակ լրագրաց մէջ .
որպէս զի ով կը ճանաչէ յիշեալ Խօ-
շապի Մարտիրոսեան Աւետիսը , եւ
գիտէ՝ թէ ուր է նա , և ինչ կ'ընէ .
կամ թէ մեռած է թէ կենդանի . ան-
միջապէս Աղդ . Պատրիարքարանիս իւ-
մաց տայ ՚ի գիտութիւն և ՚ի պատշաճ
տնօրէնութիւն :

17 Մայիս 1876:

(Կնիք)

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Պէտրութիւն գրուած նամակէ մը հարուած :

“ Որչափ որ մատգիր էի այս տեղէն
Ելլալէն յետոյ երթալ նախ՝ Այն-թու-
րու , ուր կը գտնուի Ժեղսիթաց մեծ